

Թութեան նորայ առ այս լուսնից ետ և վրկայեցէ, յատուածակոյս կողմանէ ականատես հաւատարմութեամբ ստամիջ տեղապահ սրբազան Հայրն, զի յանցեալ ամարան ինչ ոչ մնաց զորս ոչ հասոյց որով կերպիւ և իցէ ի գլուխ խղճարի ծերունայդ, նոյնպէս և ամեն հոգեւորական կենցաղաւորութեամբն: Զի հոգեւորս լուսարար Քրիզոր եպիսկոպոսին հանապազօր ոչ դադարէր ի բաժնասելոյ և ի նախատելոյ վասն բաղմամբով Տանգիւնից նորայ այժմ ինքն գերազանցեաց ամենայնիւ քան զնա և քան զամենեւեան, որք ոչ առնեն և արարին երբէք, քան զորս սա յանդգնեալ առնէ միայն, զի ունի արեղայ զԶաքարեան Քրիզորն, զերկուս սարկաւազունս, երկուս զպիւրս զԹուռնի թուանքչին, զերկուս եղբարսն խոհարարի, թողում ասել զգերձակի աշակերտս և զայլ ծանօթ անպակասելի մըշտակեաց հացակերսն, որք զցայգ և զցերեկ սեփականեալքն են խցին: Աւտի թէ կարող էր կերպիւ իւր սանձել և յուղղութիւն ածել, այն է զի բարի լինիցի մեզ և ամենեցուն, ապա թէ ոչ բարեւոր համարիմ, եթէ համանգամայն ծայրագոյն իշխանութիւն ինքեան յանձնեցես, թերեւս փոքր ինչ հանդարտեցին խղճարի միարանութիւն և խղճարի լսելիք նոցա ազատեցին յանտանելի հայհոյութեանցն: Քանզի այսպէս էին ճշմարտութիւն, զոր գրեցաք անսուտ առաջի Աստուծոյ, որպէս ահա և տիրացու Արքահայրն ունի պատմի զորս ետես աչօք բացօք և ականջօք լուսուս, որ զրեթէ յուսահատութեամբն փութացաւ ի դարձ, յորմէ եթէ երկրայեցիք, զրեւ և տեղեկացիր ի միարանութեանց աստի և առաւել քան զիս բողբ կարգացեն ի հաւատարմութիւն, վասնորոյ ազաչեմ զգլխութիւնդ, ապա կացո՞ զիս բաւական տապակեցայ ամենայն կերպիւ, այլ ոչ ևս կարեմ հանդարտիլ, և որպէս հրաժարեալ եմ նոյն եմ անփոփոխելի, և ոչ եղէց ձեռնամուխ իմէ, ոչ ընկալաց զբաւականութիւն ի ձերմ, մեծութենէ, որում ահա մնամ անապեւտ անկալութեամբ:

Արդ՝ պատուական Հայր, զճանրութիւն տուրն եւ բառնամ, զտօթ և զցուրտ, ըզհաշիւ տեսանելն, անձամբ անձին գոռն բա-

նայն, ամենայն իրաց մանրամասն վերահատութիւն, յամենայն աչաց անկանիւն, եթէ զբարեանուութիւն ընկալաց, իրաւունք է, զի այսպիսի դառն նախասանօք և արատաւորութեամբ ունայնացուցէ զխոստակ իմ, մեռեցանելով զիս վատահամբաւութեամբ առաջի ամենայն ազգաց, արգարե մինչև ցարդ վաղ ուրեմն իսպառ զխոսկին ընդ հոգոյ հաւասարեալ էի, եթէ յայլ սինօթական եղբարցն բաւական սրտագիւրութիւն չունենայի, որոց Աստուած բարի տացէ, անբաւ են շնորհակալութիւն իմ զայնցանէ յաղագս ամենայնի միթիւրութեան նոցա: Ո՞ղջ լեր և մնամ զամենայն կեանս իմ ի սրտէ ազօթող վասն կենացդ պայծառութեան անձնանուէր հպատակութեամբ:

Եփէմ Դաւաթ Եպո.

Բարեւոյ Արք. Եպիսկոպոսեան

1822 ի 1 նոյեմբ.

Ի Ս. Եջմիածին:

ՏԱԾԿԱՀԱՅՔ.

— Երուսաղէմի Գունաց Պատրիարքը երկու եպիսկոպոսներու և մէկ քանի վարդապետներու հետ Ծննդեան երբորդ օրը շնորհաւորական այցելութեան դացեր է Տ. Գարութիւն Ս. Պատրիարքին: Նոյն տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւն տուեր են նաեւ Ասորիներու և Դըպտիներու եպիսկոպոսները:

— Վաղանգը հանգիստաւորապէս տօնուեցաւ Սանասարեան վարժարանին մէջ դեկտ. 31-ի գէշերը:

Ներկայ էին, վարժարանին գիշերօթիկ և ցերեկեայ բոլոր աշակերտներէն ի դատ, տեղւոյս առաջն. Տեղապահ և Սանասարեանի Հոգաբարձութեան նախագահ Գեր. Տ. Զաւէն Ծ., վարդապետ, ի դիմաց Հոգաբարձութեան՝ դանձապետ Վարապետ Էֆէնտի Տ. Աղաբեան, տեսչական և ուսուցչական մարմինները: Հանդէսը ըստ իրար և համեմատի քայլերով, որուն ունիւղեցին ներկայը յօտնկայս:

— Ս. Ծննդեան Խթման առթիւ, իրիկուն ժամերգութեան յետոյ, տնօրէնէր սովորական հանդէսը կատարուեցաւ Սանասարեան վարժարանի մէջ, հանգիստաւորութեամբ Գեր. Տ. Զաւէն

Ծ. վարդապետի, որուն կընկերակցէր առաջնորդ Փոխանորդ Արթ. Տ. Ներսէս Հայր: Աշակերտները միաբերան երգեցին «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը: Անկէ ետքը Ն. Գերասիմովսկիին կարգաց Ծննդեան Աւետարանը և «Պահպանելու» ու «Հայր մեր»-ով փակեց հանդէսը:

— Նախընթաց դեկտ. 26-ին, իր 63 տարեկան հասակին մէջ ի Տէր հանդեաւ ընդի Արաբկերցի Տիկին Մարիամ Յ. Ծիլէճեան (ձնեալ Թաշճեան): Հանգուցեալ տիկնոջ զաւակները իրենց մօր յուղարկաւորութեան տխուր հանդէսին առթիւ ըրին հետեւեալ նուիրատուութիւնները.

Պարնոյ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ սնտուկին	7, 72, 103—
Պարնոյ Աղքատաց Խնամակալութեան սնտուկին	103—
Պարնոյ Պարմիր վանքի որբանոցին	206—
Արաբկերի Աղգ. Որբանոցին	206—
Արաբկերի Մայր-եկեղեցւոյ սնտուկին	103—
Արաբկերի Աղքատաց Խնամակալութեան սնտուկին և եկեղեցականաց	103—
Պարնեւնակ մի քանի Արաբկերցի աղքատներու Տ. Մակար հօր ձեռամբ	70—

Գմբ. 894—դրշ.

— Մարկոս էֆ. Աղաբեկեան կրօնական շաբաթաթերթ մը հրատարակելու արտօնութիւն ուզած ըլլալով, որոշուեցաւ խնդիրը օրակարգի մէջ անցընել, և խորհրդակցել ժողովոյ յառաջիկայ նիստերուն մէջ:

— Որոշուեցաւ Ափրիկեան Տրիպոլիսը Պատրիարքարանի հովուութիւն նկատել:

— Նպաստից Յանձնաժողովն ալ երէկ դուրսդուեցաւ Աղգ. Պատրիարքարանի մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարքին:— Արաբկերի առաջնորդ Մուշեղ Ծ. վրդ. որբոց ապագային ապահովութեան համար առաջարկած էր, որ Պատրիարքարանէն նպաստ մը յատկացուի տեղւոյն որբանոցին մէջ արհեստանոցի ձեւը մը հաստատելու համար, Յանձնաժողովը որոշեց նախ տեղեկանալ թէ՛ ինչ արհեստներ պիտի ուսուցուին որբոց, թէ՛ ինչ ծախքով կրնայ հոգացուիլ առաջարկուած արհեստանոցը և թէ՛ ինչ կերպով պիտի կրնայ ապահովուիլ որբերու ապագան:

— Աղգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը առաջարկած է, որ գաւառներէն բերուած որբերէն 4ը, որոնք չափահաս են, այլ ևս իրենց տեղերը գործուին: Բնաւոր դատուեցաւ ներկայացուած առաջարկը և ընդունուեցաւ գործնան իրենց գաւառները գործել յիշեալ որ-

բերը, նախապէս իրենց գաւառներու առաջնորդներէն տեղեկութիւն ուղելով թէ այդ որբերը ինչ միջոցներով պիտի կրնան իրենց ապրուստն ու ապագան հոգալ:

— Հաճընի Որբանոցի Հոգաբարձութիւնը որբանոցի շէնքը ընդարձակելու համար նպաստ խնդրած ըլլալով, որոշուեցաւ գրել թէ Յանձնաժողովոյ հասոյթները չեն ներեր, որ այդ տեսակ պարագաներու մէջ նպաստ հասցնէ, ուստի մերժուեցաւ ներկայացուած առաջարկը:

— Կետարացի Խուպէսեան Կարապետ անուն աղգայինը, որ վերջերս իր մահկանացուն կնքեց, իր կենդանութեան ժամանակ զանազան կրօնական և բարեգործական հաստատութեանց 3,500 ոսկի գումար մը կտակած էր, ինչպէս ծանուցուեցաւ ասկէ առաջ: Հանգուցեալին կինը այս անգամ ալ Կետարիոյ, Կէմմիրի և Թալլուսունի եկեղեցիներուն 13 ոսկի նուիրեր և Ս. Կարապետի տունին իր ամուսնոյն հոգւոյն համար կատարուած հոգնհանգստեան առթիւ ալ Թալասի Ս. Թորոս եկեղեցւոյն 11 ոսկի և 16 ոսկի արժէք ունեցող 24 շապիկ նուիրեր է:

— Որբերու համար Կաղանդէն մէկ քանի օր առաջ մեր բացած հանդանակութիւնը կը փակեց այսօր: Շաբաթ օրուան թերթին մէջ մեր հրատարակած վերջին ցուցակին գումարն էր 1645 դշ. և նոյն օրը Ատարաղարէն ստացանք 655 դշ. Սէմիդեան Կարապետ էֆ.-ի նախաձեռնութեամբ հանդանակուած: Այդ հանդանակութեան մանրամասն ցուցակը կը հրատարակենք վաղուան թուով, և հանդանակութեան ընդհանուր գումարը 2300 դշ. կը յանձնենք նպաստից Յանձնաժողովոյ նախագահ Ս. Պատրիարքին: Խնդրելով որ Որբանոցներու մէջ դանուող աղայոց մէկ պէտքը հայթայթուի այդ գումարէն, իսկ Ատարաղարէն եկած գումարը բացառապէս յատկացուի որբանոցի մը երկրագործական գործիչ հայթայթելու գործնական և դովելի առաջարկի մը, որուն համար յատկապէս կը շնորհաւորենք նուիրատուները, չմոռնալով դրուստել նաև իրենց տրամադրութիւնները: Ինչպէս կը յիշուի, անցեալ տարի Կաղանդին ալ նոյն նուէրները ընդունեցանք, որուն արդիւնքը 1091,20 դշ. եղաւ: Գոհ ենք որ այս տարուան արդիւնքը անցեալ տարուանին կրկինը և աւելին եղաւ:

— Որդոց որոտման տօնին օրը Երզնասդէմի Գլխադիր Ս. Յակոբ առաքելի տաճարին մէջ մեծահանդէս կատարուեր է Տեառնեղբայր առաքելին տօնախմբութիւնը, ի ներկայութեան բազմաթիւ ուխտաւորներու և օտարազգի նշանաւոր հիւրերու: Պատարադեր է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը, և արարողութիւնը կատարուեր է եռաձայն երգեցողութեամբ: Պատարադիչ Սըր-

բազմանը երեք քառորդ ժամու չափ քարոզեր է ուրիշ վերջը Վերաբերման հանդէսը կատարուեր է։ Պատարագէն վերջը կատարուեր է եկեղեցական հանգիստաւոր թափօրը։ Ապա Պատրիարքաբանին մէջ Տ. Գարութիւն Պատրիարքը ընդունել է մեղաբանութեան և ուխտաւորաց շնորհաւորութիւնները։ Այս արարողութեան ներկայ գտնուել են ի միջև այլոց, Երուսաղէմի Ֆրանսական ընդհանուր հիւպատոսը, իր տեղինը հետ, և «Ֆիկառ» և «Ժուրնալ» թերթերու թղթակից պ. Ժիւլ Պուա, որ յատկապէս Երուսաղէմ դացած էր վերջերս, ուրիշ գեկա. 29-ին մեկնել է։ Պ Ժիւլ Պուա նոյն օրը այցելել է նաև Ժառանգաւորաց վարժարանը, և աշակերտներուն վիճակին, վարժարանի ծրարքին վրայ տեղեկութիւններ քաղել է տեսուչ վարդապետէն, խոստանալով հրատարակել զանոնք։ Նրիտասարդ զրադէտը, հաւաստել է թէ պետի աշխատի հանրէն ստրկի։

— Հայ եպիսկոպոսներու երեցագոյնը Տ. Երիստակէս արքեպս. Գերձակեան, որ բաւական տարիներէ ի վեր Պաղատաի Հայոց հովուութիւնը կը վարէր Պատր. Փոխանորդ տեղոյսով, յանկարծամահ եղեր է նոյն քաղաքին մէջ։ Այս տեղեկութիւնը հեռագրաւ հաղորդուած ըլլալով Պատրիարքարան, Ս Պատրիարքը ի պատասխանի հեռագիր մը ուղղեց երէկ Պաղատաի Գաւառ. Վարչութեան, յանձնարարելով որ յուղարկաւորութիւնը պատշաճ մեծարանքը կատարուի, և գոյքերը պահպանուին։ Աւետիս քնյ, առաջն. Փոխանորդի պաշտօնը վարէ։ Հանգուցեալ եպիսկոպոսը 1828 թուականին ծնած ըլլալով, 72 տարեկան կը վախճանի։ Բնիկ երուսաղիմայ միաբան ըլլալով, 1861 թուականին եպիսկոպոս ձեռնադրուած էր Մատթէոս Կաթողիկոսին։

— Ս. Երուսաղէմի Տ. Գարութիւն Ս. Պատրիարք Հայրը լսելով որ Ափրիկեան Տրեպոլոյ մէջ գտնուող կարդ մը աղագայններ թէպէտ հոգևոր պաշտօնեայ մը ունին, եկեղեցական գիրքերէ զորի կը գտնուին, հարկ եղած բոլոր գիրքերը նուիրուած է վանքին գրադարանէն, և այս մասին տեղեկութիւն տուած է նաև Կ. Պոլսոյ Պատրիարքարանին։ Կրօնական ժողովը իր վերջին նիստին մէջ որոշեց շնորհակալութեան զիր մը ուղղել ն. Ամենապատուութեան, իր այդ հոգածութեան համար։

— Բաբերդէ նամակագիրը մը նպաստեց Գանձնաժողովին ուշագրութիւնը կը հրա իրէ տեղոյն 110 տուն հացակարօտ ընտանիքներին վրայ, որոնց անգամներէն շատեր կը մուրան դուռնէ դուռ, ապրուոտի միջոց չունենալուն պատճառաւ։ Բաղմաթիւ աղաք, կիսամերկ ու բոկոսան, այս ցուրտերուն լողոցն են մնացած, և ճաթը

տած ձեռքերն կը կարկառեն անցորդներու, քանի մը վարայի սղորմութիւն և կամ շերտ մը հաց ստանալու յոյսով։ Նամակագիրը նպաստեց Գանձնաժողովին կողմէ յատկացուելիք օր և է նըպատի մը անհրաժեշտութիւնը շեշտելով, կը յուսայ որ այդ տեսակ դումարով մը եթէ ոչ բոլորովին, դոնէ բաւական զգալի կերպով ամուրսի այդ կարօտեալ ընտանիքներուն հիմակուան արդահատելի վիճակը։

— Պէրպէրեան Վարժարանի 40-ի չափ նախկին սաներ հանրագրութեամբ մը Ս. Պատրիարք Հօր գիմեցին, իրենց մէջէն ընտրուած պատուաւոր պատգամաւորութեան մը միջոցաւ, յիշելով Ռէթէս էֆ. Պէրպէրեանի կարևոր ծառայութիւնները կրթական տապալէզին մէջ, և իր Վարժարանին բաղմամեայ արդիւնքները, և ինդրելով որ առաջիկայ Հոկտ. 1ին, նոյն Վարժարանին հաստատման 25րդ տարեդարձին առթիւ, Պէրպէրեան էֆ. յորելեանը կատարուի և այս առթիւ վայելուչ նուէր մը տրուի իրեն, և այս գործը կազմակերպելու համար յանձնաժողով մ'ընտրուի, նախագահութեամբ ն. Ամենապատուութեան, Ս. Պատրիարք Հայրը գովեց Պէրպէրեան սաներուն երախտագիտական զգացմունքը, յանձն առաւ Կարգադիր Գանձնաժողովին նախագահութիւնը, և խոստացաւ իր կողմէ պէտք եղած ամէն գիւրութիւն ընծայել։ Պատգամաւորութիւնը մեկնեցաւ շնորհակալութեամբ։

— Տիւրիկէ կ'գրեն մեզ. — Տիւրիկէ ունի երկու եկեղեցի և մէկ դպրոց Ադ. Ս. Ներսէսեան անուամբ որ կառուած է ճիկրաշէն թաղի մօտ Ադդ. գերեզմանատան մէջ, երկայրակի վրայ, որ իր փառաւոր դիրքով և մարտը օգտով նախանձելի է։ Վարժարանի մէջ կուտանին 300-է աւելի աշակերտներ վեց ուսուցիչներով, հոկողութեամբ հօգարարձու էֆէնտիներու, որ Կ. Պոլսոյ Վաղֆի կալուածոց Հոգարարձութեան կողմէ վաւերացուած են. Աշակերտը ինն կարգի բաժանուած են, վեցը նախակրթարան և երեքը ծաղիոց. տըղայք մեծաւ մասամբ ձրի են և թոշակ վճարող հազուադիւս, վասն զի վարժուած չեն ստակ վճարել։ Ծախքը կհոգացուի Կ. Պոլսոյ մէջ ունեցած կալուածոց եկամուտով. Ժամանակաւ պիւտէն մինչև երեք հարիւր Օսմ. ոսկիի կհատնել։ Սահայն Պոլսոյ ծանօթ երկրաշարժէն ի վեր նուաղած է և այժմ հարիւր քսան ոսկիի պիւտէն ունի։ Նախորդ տարեշրջանին Հոգարարձութիւնը Միհրան էֆ. Խորթումեանին ի պաշտօն կոչեց հինգ ոսկի ամսաթոշակով աղայոց թոշակին վստահելով։ Հազիւ երկու ամիս տևեց, և ահա վարժարանի վիճակը խանգարուեցաւ երկու աւագ ուսուցիչներու անհամաձայնութեամբ։ Նրիւ ամիս առաջ Միհրան և Հայրապետ էֆէն-

տիները ժամանակացոյցն և այլ կարգադրութեանց վրայ անհամաձայնելով խնդրեն սննդաւ կը տաքանայ որ ծայրահեղութեան կհասնել ի ներկայութեան աշակերտաց Պատ. Հոգաբարձութիւնն ամէն քանք ի գործ դրաւ որ սոյն կռիւք ընդհատէ՝ բայց անկարելի եղաւ հաշտութիւն գոյացնել. երկու կողմն ալ կպնդեն մէկմէկու հրաժարեցոյցման վրայ ճշմարտութիւնը մէկ կողմը չէ՝ այլ երկուքն ալ ունին իրենց ուղիղն և սխալը. Հոգաբարձութիւնն երկու կուռող էֆ. ներն ալ իրենց պաշտօնէն հրաժարեցոյց՝ թէ և վարժարանը փակուած չէ. տղայք օրական մէկ կամ երկու դաս առնելով տուն կվերագտանան ժողովուրդը խնստ գրգռուած է վարժարանի խնդրէն. Առժամեայ Թաղ. Խորհուրդն և հոգաբարձուներն իրենց անվերջանալի ժողովները կգումարեն ամէն օր, բայց արդիւնք գոյացած չունին. Զեմ գիտեք Վ. Պոլսոյ կալուածոց Հոգաբարձութիւնն ալ լուր ունի՝ կամ ի՞նչ կխորհի այս մասին. կամ միթէ ասոնցմէ դատ ուրիշ դատաւորներ կը պակսեն որ շուտով պաշտօնի չեն կոչուիր:

Կ Ր Թ Ո Ւ Ի Թ Ո Ւ Ի Ն.

(Պատուէն)

Ա) Այս խօսքի ընդունուած իմաստը: Ժամանակակից սերունդի համար կրթութիւն բառից աւելի սովորական դարձած բառ քիչ կայ. Հէնց որ խօսք է լինում մի որ և է մարդու մասին. իսկոյն սկսում են քննել, կըրթում և նա թէ ոչ. Եւ իրօք այս մի շատ նշանաւոր հարց է. նորա լուծումից կախուած է թէ արդեօք ի՞նչպէս պէտք է վարուել այն մարդու հետ. կարելի է իրեն հաւասար մէկը ընդունել և նստել նորա հետ մի սեղանի շուրջը թէ ոչ. կրթուածներ և անկիրթներ. ահա թէ ներկայումս որպիսի բաժանմունք են դնում հասարակութեան մէջ. Այս բաժանմունքը նախորդ բոլոր որոշմանց տեղն է բռնել. Առաջ մարդոց բաժանում էին այսպէս. ազնուականներ և հասարակ մարդիկ. հաւատացեալներ և անհաւատներ. բողոքականներ և կաթոլիկներ. քրիստոնեաներ և հրէաներ. Ծշմարիտ է. այս բոլոր բաժանմունքների մասին յիշողութիւնը

դեռ կենդանի է. բայց գործնական տեսակէտից նշանակութիւն ունեցողը և վճռականը այժմ կրթուածների ու անկիրթների բաժանմունքն է. Ով մարդկանց այս երկու կարգի բաժանող սահմանի վրայ է կանգնած, նա հասարակութեան անդամ է. իսկ ով այս սահմանից դուրս է, նորա առաջ փակ է ինսամիութեան (connubium) և վաճառականութեան (commercium) մուտքը. Նորա հետ մօտիկ ծանօթութիւն ունենալը, չասելք ազգակցական կապերով միանալը, պատշաճութեան տեսակէտից անհնարին է համարուում. Ինչու մի տարբերութիւնը. Ո՞րն է կրթութեան ուղին ու ծուծը. ի՞նչ է նորա նշանակութիւնը գործնական խօսքի մէջ. Սկսենք արտաքին նշաններից:

Լրագրում ասած է. ըստ երեւութին կրթուածների դասակարգին պատկանող մի մարդ, իր տարօրինակ վարմունքով ընդհանուրի ուշադրութիւնը դրաւեց. Լրատուն ի՞նչ նշաններից որոշեց այն մարդու կրթուած լինելը. Երեւի նորա հագած սերտուկից, շատ կարելի է ձեռնոցներից, որոնք գոնէ լի օրը կրթութեան նշան են. նոքա ցոյց են տալիս, որ իրենց գործ ածողը ձեռքի աշխատանք չի անում. Աւելի հաւաստի նշաններ են սպիտակ ձեռները և երկար եղունգները. Տպագրական ընկերութիւնը բոլոր կրթուած մարդկանց ծանուցանում է. նոր լոյս տեսած գրականութեան պատմութեան կամ ընդհանուր պատմութեան մասին և բոլորի վերայ պարտք է դնում այդ գրուածքը գնել. Ո՞վ է այստեղ ի նկատի առնուած, և ո՞վ այդ իւր պարտքը պիտի համարէ. Եւ ո՞ւմ ի նկատի ունի զիմնազիայի աշակերտուհին, որ հիւր գնացած է լինում և վերադառնալով պատմում է այն կրթուած մարդկանց մասին. որոնց նա այնտեղ տեսել էր:

Ամենայն բարեխղճութեամբ քննելով այն զգացումը որ իմ մէջ կապուում է կրթութիւն խօսքի գործածութեան հետ. ես գրտնում եմ հետեւեալը. կրթուած է նա, ով ձեռքի աշխատանք չի անում, ով գիտէ պատշաճ ձեռով հագնուել և պահել իրեն և հասարակութեան մէջ սովորաբար դատողութեան առարկայ դարձող ամեն նիւթի մասին